ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԵՊՀ պրոռեկտոր
Ռ. Բարխուդարյան
03.07.2026

ԿԱՐԾԻՔ

Երևանի պետական համալսարանի թյուրքագիտության ամբիոնի 2026 թ. հուլիսի 1-ի նիստի թիվ 7 արձանագրությունից

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի 2026 թ. հունիսի 26-ի 6-րդ նիստի:

ԱՄԲԻՈՆԻ ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԷԻՆ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., պրոֆ. Ա. Սաֆարյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Սողոմոնյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Սահակյանը, պ.գ.թ., դոցենտ Վ. Գեղամյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Ս. Գալշոյանը, պ.գ.թ., դոցենտ Մ. Աբրահամյանը, բ.գ.թ., դոցենտ Լ Սաֆրաստյանը, պ.գ.թ. Գ. Հովհաննիսյանը, բ.գ.թ. Մ. Մելքոնյանը:

ԼՍԵՑԻՆ. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ Վերոնիկա Աշոտի Թորոսյանի՝ «Եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերը. համեմատական վերլուծություն» (գիտական ղեկավար՝ պ.գ.դ. Վահրամ Տեր-Մաթևոսյան) թեկնածուական ատենախոսության քննարկումը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., պրոֆեսոր Ա. Սաֆարյանը, պ.գ.թ., դոցենտ Վ. Գեղամյանը, պ.գ.թ., դոցենտ Լ. Սահակյանը, պ.գ.թ., դոցենտ Ա. Սողոմոնյանը, պ.գ.թ., դոցենտ Մ. Աբրահամյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Վերոնիկա Աշոտի Թորոսյանի՝ «Եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերը. համեմատական վերլուծություն» ատենախոսությունը նվիրված է ժամանակակից աշխարհաքաղաքական կարևոր հիմնահարցերից մեկին՝ եվրասիականությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս հայեցակարգ-գաղափարախոսությունը լայնորեն առկա է թե՛ Ռուսաստանի, թե՛ Թուրքիայի

արտաքին քաղաքականության շուրջ քննարկումներում, ինչպես նաև հանդիսանում է եվրասիական լայն տարածաշրջանի ներկայի ու ապագայի վերաբերյալ գաղափարական-քաղաքական բանավեճերի կենտրոնական խնդիրներից մեկը, ապա կարելի է վստահ նշել, որ թեման ունի ընդգծված արդիականություն:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք բաժանվում են տասնմեկ ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային A4 շարվածքի 192 էջ:

Ներածությունը պատկերացում է տալիս ատենախոսության արդիականության, նպատակի և մի շարք հայեցակարգային կարևոր տեսակետների մասին: Ատենախոսության նպատակն ու առաջադրված հետազոտական խնդիրները հստակ են սահմանված, աշխատանքի բովանդակությունը և հիմնական եզրահանգումները բխում են դրանցից:

Ելույթ ունեցողներն անդրադարձան նաև ատենախոսության առաձին գլուխների բովանդակությանը: Աշխատանքի առաջին գլխում ներկայացված պատմական հակիրճ նկարագիրը, որում տրված են ռուսական ու թուրքական եվրասիականության ծագումն ու զարգացումը, հնարավորություն է տալիս ընդհանրական պատկերացում կազմել այս խնդրի վերաբերյալ՝ միանգամից հասկանալով, որ գործ ունենք տարբեր երևույթների հետ: Պատմական հիմքերի ուսումնասիրությունը ապացուցում է, որ մի դեպքում խոսք է գնում կայացած գաղափարախոսության մասին (ռուսական եվրասիականություն), մյուս դեպքում՝ տարբեր գաղափարախոսությունների շրջանակներում օգտագործվող հայեցակարգի հետ (թուրքական եվրասիականություն): Հեղինակը նաև համառոտ ցույց է տալիս, որ թուրքական եվրասիականությունը դեռ շարունակում է զարգանալ՝ հղկվելով և ամբողջանալով գործնական կիրառման մեջ:

Աշխատանքի երկրորդ գլուխը, որը կարելի է համարել հետազոտության առանցքային հատվածը, ներկայացնում է եվրասիականության երկու տարբերակների համեմատությունը: Այն համոզիչ կերպով ցույց է տալիս, որ չնայած բազմաթիվ համադրելի կողմերին, եվրասիական ռուսական և թուրքական տարբերակները առանցքային հարցերում գտնվում են խիստ հակադրության մեջ: Առաջին հերթին խոսքը վերաբերում է ազգայնականության խնդրին. ի տարբերություն ռուսականի՝ թուրքական եվրասիականությունը հիմվում է

էթնոկենտրոն ազգայնականության վրա: Հեղինակի կողմից այս և այլ հակադրությունների վերհանումն ունի պրակտիկ նշանակություն. այն ակնհայտ է դարձնում Ռուսաստանի ու Թուրքիայի միջև եվրասիականության հենքի վրա սերտ դաշնակցության օբյեկտիվ սահմանափակումները:

Աշխատանքի երրորդ գլխում փաստացի իրականացված է բազմակի քեյս-սթադի (multiple case study), որն ուսումնասիրում է եվրասիականության գործիքայնացումը և դրա դրսևորումները Ռուսաստանի ու Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ: Այս մոտեցումը ևս շատ պրագմատիկ է թվում՝ թույլ տալով նոր դիտանկյունից նայել Հայաստանի համար առանցքային կարևորություն ունեցող երկու միջազգային կառույցներին (Եվրասիական տնտեսական միությանը և Թյուրքական պետությունների կազմակերպությանը):

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության հիմնական եզրահանգումները:

Վ. Թորոսյանի ատենախոսության թեման ունի ինչպես գիտական, այնպես էլ գործնական-կիրառական նշանակություն, արդիականություն և պարունակում է նորույթ: Աշխատանքում արծարծված դրույթները կարող են օգտագործվել ընդհանուր և հատուկ ուսումնական ծրագրերում, ձեռնարկներում, դասախոսություններում: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել ՀՀ մի շարք պետական կառույցների գործունեության համապատասխան ուղղությունների տեսական հիմնավորումների և դիվանագիտական փաստարկումների մշակման տեսանկյունից:

Ատենախոսության մի շարք դրույթներ, եզրահանգումներ արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված չորս գիտական հոդվածներում:

Սեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը և համապատասխանում է ներկայացվող պահանջներին:

Ընդհանուր առմամբ կատարված է բազմակողմանի և միաժամանակ համոզիչ փաստարկմամբ ուսումնասիրություն, սակայն աշխատանքը նկատելիորեն կշահեր, եթե.

1. առավել մանրամասն քննության առնվեր Թուրքիայում եվրասիականության զարգացման ներքին համատեքստը, մասնավորապես Թուրքիայում առկա հիմնական գաղափարախոսությունները և քաղաքական իրադրության առանձնահատկությունները 1990-ից ի վեր,
2. քննության հիմքում ներառվեր նաև աշխարհագրական դետերմինիզմի տեսությունը, որը թույլ կտար էլ ավելի ամբողջական կերպով ներկայացնել եվրասիականության առանձին տարրերի կարևորությունը ռուսական և թուրքական քաղաքական մտքում,
3. համառոտ անդրադարձ կատարվեր նաև միջազգային համատեքստին, քանի որ եվրասիականության երկու տարբերակները զարգանում են գլոբալ միտումների հորձանուտում, որոնք էականորեն անդրադառնում են այդ զարգացման վրա,
4. ներկայացվեր եվրասիականության վերաբերյալ երկու երկրներում առկա հանրային ընկալումների համապատկերը, ինչը թույլ կտար հասկանալ այս պետություններում (չնայած վերջիններիս ավտորիտար բնույթին) եվրասիականության զարգացման ու ընդլայնման հնարավորությունների ապագան:
5. աշխատանքում առկա են առանձին վրիպակներ:

Այնուամենայնիվ, վերոնշյալ դիտողություններն ամենևին չեն ստվերում աշխատանքի ընդհանուր արժեքը: Կարծում ենք, որ Վերոնիկա Թորոսյանի «Եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերը. համեմատական վերլուծություն» թեմայով ատենախոսությունը հաջողված և նորույթ պարունակող գիտական աշխատանք է:

ՈՐՈՇԵՑԻՆ. Վերոնիկա Աշոտի Թորոսյանի «Եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերը. համեմատական վերլուծություն» թեմայով ատենախոսությունը բավարարում է Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող ԲՈԿ-ի պահանջներին, իսկ նրա

հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Երևանի պետական համալսարանի

թյուրքագիտության ամբիոնի վարիչ,

պ.գ.թ., պրոֆեսոր՝ Ալ. Սաֆարյան

Նիստի քարտուղար՝ Մ. Մամյան

26-ը հունիսի 2026 թ.

ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., պրոֆեսոր Ալ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտքարտուղար, բ.գ.թ.՝ Մ. Հովհաննիսյան